11) Ս Պ Ե Կ Ի Ա .

Մադրիդ, Մանզանարէս գետի վերայ, արքայանիստ 240.000

12) Ի Տ Ա Լ Ի Ա .

Աորա ամէջ կան եօթը զլիսաւոր տէրութիւնք, որոնք են.

13) Ս Ա Ր Դ Կ Ի Ա .

Տուրին քաղաքով 150.000

* Յարա երկուք ազատ քաղաքներ են:

2) Տ Ա Ս Կ Ա Ն Ա .

Բնակչութեարքի թիւ:

Տնաբանական գումար	79,00
-------------------	-------

3) Հ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Տ Ի Ւ Ն Ե Ր Ա Խ Թ Ի Ւ Ն Ե Ր .

Հ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Տ Ի Ւ Ն Ե Ր	176,000
-----------------------------	---------

4) Ն Ա Պ Ո Ւ Խ Կ Ա Մ Ե Ր Ա Խ Ս Ի Կ Ա Լ Ա Բ Ե Ր Ա Տ Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր .

Ն Ա Պ Ո Ւ Խ Կ Ա Մ Ե Ր Ա Խ Ս Ի Կ Ա Լ Ա Բ Ե Ր Ա Տ Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր	338,000
---------------------------------------------------------------------	---------

5) Պ Ա Ր Ա Ր Ա .

Պ Ա Ր Ա Ր Ա	36,000
Պ Ի Խ Ա Ժ Ե Ն Գ Ա	30,000

Տ Ե Շ Կ Ա Ս Ա Ծ Ե Ր .

Այս բաժանվումէ երկու գլխաւոր մասն, այսնիքն Եւրոպական, որ է բաւ-
մէլի, և Ասիական Տաճկաստան, որ է Անագոլու.

Ե Խ Բ Ո Պ Ա Կ Ա Ն Ե Ր Ա Տ Ա Ծ Ա Ծ Ա Ն Ե Ր .

Կոստանդնուպոլիս կամ Ստամբուլ, արքայանիստ	813,000
Ազրիանօպոլիս կամ Էղիոնէ	100,000

Ա Ա Լ Ա Խ Ի Ա Ա .

Բուխարեստ	60,000
-----------	--------

Մ Ա Լ Ա Խ Ա Ի Ա .

Եաշ.	30,000
------	--------

Ա Ե Բ Բ Ի Ա .

Բելղրադ 40.000

Յ Ա Ւ Ն Ա Ս Ա Կ Յ .

Ամենայ կամ Ամինա, արքայանիստ 26.000

ԲԵՐՈՅԵԿԵՐԱՏ

—

Մարդս Աստուծոյ ձեռագործն է և աշխարհքի երեսի վերայ եղած ամենայն արարածներից կատարելագոյն։ Նորա այլ արարածներից գերազանցութեան պատճառն է նորա հոգին, բանականութիւնը, որ ուրիշ արարածները չ'ունին։ Մարդը իւր մօրից ծնած ժամանակը թէկ ունի հոգի, բայց նորա բանականութիւնը կերպարանագործված չէ։ այն հոգին, որ նա ունի, լուսաւորված չէ։ երբ որ երեխայն սկսումն աճիլ մարմաւորապէս, նորա հոգեկան կարողութիւնքը ևս սկսումն զարթնուլ և բան հասկանալ։ Այս ժամանակումը էք, դուք ահա։ սիրելի երեխայք, մինչ կարդումք ձեր համար մտածողի այս աշխատութիւնը։

Դուք, քանի մի երկու տարեկան էիք ոչինչ բան չեիք հասկանում, բայց այժմ, եթէ մի մարդ մի բան ասէ ձեզ, հասկանումքը ուրիմ ձեր հոգեկան կարողութիւնքը սկսել են շարժվիլ, այս այն միջոցն է ահա, երբ այս շարժողութեանը հարկաւոր է լաւ ուղղութիւն տալ, միշտ գէպ ի լաւը զրգուել ձեր հոգեկան զգացմունքը, որպէս զի ժամանակով կարողանաք բարոյական մարդ դառնալ, Ազգին և եկեղեցուն պարծանք։ Աշխատեցէք զիշեր և ցերեկ, որ բան սովորիք, որ ձեր հոգին, բնչպէս որ ասացի, ձեր ծնած օրից մինչև այսօր մի անլոյս մշուշով պատած է, կամաց, կամաց պայծառանայ և առաւել լաւ, աւելի մաքուր կերպով կարողանայ տեսանել և հասկանալ ինչ որ գուք այժմ տեսանումք և չեք հասկանում։

Մարդու գերագոյն արժանաւորութիւնը բանականութիւնն է ասացինք. բանականութիւն ասելը, սիրելի երեխայք, այն է, որ նա կարողանումէ խօսել, ուրիշի խօսածը լսել, հասկանալ, և երկու զիպուածումը ևս մտածել, ձանաչել բարին և չարը, լոյսը և խաւարը նա կարող է, նա աղատ է հեռանալ չարից և մօտենալ բարի բանին, ատել և հեռանալ խաւարից, սիրել և մօտենալ լուսին։ Այժմ հակացաք, իմ սիրելիք, թէ ինչ ասել է բանականութիւն, այս բանականութիւնը ահա, որ Աստուած և ձեզ պարզեցէ, զիս ևս այս բոպէիս

վայրենի է, կոշտ է, խաւար է և անկերպարան է։ Հարկաւոր է նորան ընտանեցնել, քաղաքացի առնել, կակղել, լուսաւորել և կերպարանագործել։ այս բոլոր ասած փոփոխութիւնս, որ շատ մեծ բան է, և որչափ մեծ, այնչափ ևս հարկաւոր կը կատարի ձեր բանականութեան վերայ ուստան և դաստիարակութեան ձեռքով։ ուսումն և դաստիարակութիւն ասելը բան սովորել ասել է, սիրելի երեխայլք։ Այս քանը այժմն հասկանալով, իմացիք, որ դուք պիտի աշխատիք զիշեր ցերեկ։ Ամենեն ուրիշ բանի վերայ չ'մտածեք, այլ միմիայն բան ուսանելու և լուսաւորվելու, որ ձեր բանականութիւնը կերպարանագործվի և դուք կարողանաք Աստուծոյ նմանիլ։

Վշիարհիս երեսը որքան ուսումն և գիտութիւնք կան, բոլորից զլիաւորն է Աստուածզիտութիւնը, այսինքն չանաչել Աստուածը և պաշտել նորան։

Վշի, սիրելի երեխայլք, մեք պարտական ենք ճանաչել նորան, մեք միափ հող էինք, իսկ հողից յառաջ ոչինչ, նա ոչնչից հող գոյացուց, յետոյ այն հողից մեզ ստեղծեց. նա այն հողից շատ արարածներ ևս ստեղծեց, բայց մեր վերայ միայն վշելով կենդանի շունչ, պարգևեց մեզ իւր հողին և աշխարհի այլ արարածների վերայ մեզ թագաւոր շինեց, այնպէս, որ ամենայն այլ արարած, ինչ որ մեր աչքը կարող է տեսանել հնագանդվումք մեզ. թէ շնչաւոր, այսինքն շունչ ունեցող, ուրեմն զանազան կենդանիք, զաղանները և թռչունները. թէ անշունչք, այսինքն շունչ չունեցող. ծառերը, արօտները և հանքերը. քարը, երկաթը, ոսկին և այլն. մինչև անդամ երկնքի կայծայկը հնազանդ է մեզ և մեք կարող ենք վայր քարշել նորան երկնքից, որ չ'վնասէ մեզ։ Որովհետեւ Աստուած այսպէս բարերար է մեզ, որ ոչնչից ստեղծելով, այսքան պարզեներ ևս տուել է մեզ. այս պատճառով մեք պարտական ենք պաշտել և սիրել նորան, կատարել նորա կամքը և հրամանել։

Վշիքան մեծ բարերարութեանը փոխանակ Աստուած շատ փոքր բան է պահանջում մեզանից, նորա բոլոր կամքը և հրամանը այն է, որ մեք սիրենք միմէ անց և ամենենին միմէ անց չ'զրկենք, չ'ատենք և չ'վնասենք. ինչու որ իրաւունք չունենք. մեզանից իւրաքանչիւրս հաւասար ամեներիս պէս Աստուծոյ որդին է, և եթէ մեք մեր եղբօրը չ'սիրենք, վեասենք, ատենք, պյու ժամանակ մեր ձայրը ևս, այսինքն Աստուած կը բարկանայ մեզ վերայ, որովհետեւ պաշտած չ'ենք նորա սուրբ կամքը։ Մեր պարտականութիւնը է, սիրելի երեխայլք, Աստուծոյ նմանիլ. Աստուածինքը կեցած տեղը սէր է. մեք ևս մեր մեջ սէր ունենալով, կը նմանինք Աստուծոյ. — Աստուծոյ պատկեր կը լինենք, ապա թէ ոչ, մեք սիրու տեղ ատելութիւն, նախանձ և այլ ուրիշ մոլութիւնք պահենք մեր սրտի

մէջ, այն ժամանակ Աստուած երեսը կը դարձնէ մեզ զանից և մեք ան-
րադդ և թշուառ կը լինենք, ինչպէս այս, նոյնպէս և յարիտենական
աշխարհքումը Աստուած ասել է, որ եթէ կամնանք իմաց տալ նորան,
որ սիրումնք իւրեան—սիրենք մեր ընկերը՝ ընկեր ասելով առ հա-
սարակ մարդ պիտի հասկանանք և ոչ թէ մի տեղ նստող, կանգնաղը.
Եթէ մեք չ'սիրենք մեր ընկերը, իսկ Աստուծուն ասենք, թէ սիրումնք
քեզ Աստուած, նորան խարած կը լինենք, այս այնպիսի սարսափելի
մեղք է, որ հետի լինի ամենայն մարդուց:

Եթէ մեք, ինչպէս ասացինք, Աստուծոյ հրամանովը պարտական
ենք սիրել մեր ընկերը, այս ինքն մարդը, ապա ո՞րչափ ևս առաւել մեր
ձնողքը, որ մեր կեանքի և գոյութեանը պատճառ են եղած, Այն
երեխայն, որ կը սիրէ իւր ծնողքը, որ կը կատարէ նոցա հրամանը, Աս-
տուծոյ օրհնութիւնը կը ժառանգէ. երջանիկ կը լինի այս և այն աշ-
խարհքում, և Աստուած հարիւրապատիկ կը վարձատրէ նորան իւր պա-
տուերը կատարածին համար: Այս պատճառով, ովք երեխայք, սիրեցէք
ձեր ծնողքը, նոքա ձեղ այդ օրին են հասուցել. դուք քնած էք առա-
ւոտը, մինչ ձեր ծնողքը ձեր համար կերակուր են պատրաստում: դուք
ոչինչ հոգս չունիք. նոքա ձեղ հագուստ են պատրաստում, ձմոր
ցրափից, ամառը արևից են պահպանում: Եթէ նոքա այդպէս ինամ չը
տանէին ձեղ, եթէ նոքա չ'լինէին, լինելու չէիք և դուք: Ամսեցէք,
որպէս Աստուծոյ պատուհասից ձեր ծնողքի սիրաը վշտացնելուց: այն
որդին, որ կը տրտմեցնէ իւր ծնողքը դժոխքի բաժին կը լինի:

Օ՞նողքից յետոյ հնազանդ պէտք է լինել վարժապեաներին. նորա
աշխատումն ձեղ համար, որ դուք բան ուսանիք և լուսաւորվիք. նա-
յեցէք, երեխայք, ամաչեցէք միշտ ձեր վարժապեաներից, պատուեցէք
նորանց: Այն աշակերտը, որ դպրոցի մէջ կը սովորի իւր վարժապեա-
ներին հնազանդվիլ և լսել, նա վերջումը պարկեշտ և խաղաղասէք
քաղաքացի կը դառնայ:

Վարդու վերայ մի պարտականութիւն ևս կայ, որ դուրս է գալիս
միեւ անց սիրելուց և պատուելուց, այս ինքն սիրել մարդկային ազգը
ընդհանրապէս, իսկ իւր Ազգը յամկապէս: Վարդկութիւնը պէտք է
սիրել նորա համար, որ մեզ զանից իւրաքանչիւրը ևս մարդկութեան ան-
դամէ է: Զգոյշ կացէք, սիրելի երեխայք, կրօնի զանազանութեան պատ-
ճառով անարգել մի որպիսի և իցէ մարդկութիւն: ինչքան ևս բարբա-
րոսական լինի մի մարդու կրօն, այսու ամենայնիւ նորա կրօնը արգելք
թող չ'լինի ձեղ նորան օդնելու, եթէ այդ մարդը կարօտ էր ձեր օդնու-
թեանը, և դուք կարող էիք օդնել և միտք ունեիք ևս օդնել, եթէ

շիմանայիք, որ նա օտար կրօնից է։ Աշխարհիս երեսը կրօնի համար մարդ զբկելուց և վշտացնելուց առաւել մեծ բարբարոսութիւն չկայ, որ դուրս է գալիս տղիտութենից և կոյր մոլակրօնութենից։ Աշխատ կրօն չ'անարդէք, թող Աստուած դատաւոր լինի այդ բանին, միայն դուք ձեր կրօնին հաստատ կացէք, պատկառանքով խօսեցէք կրօնի վերայ և զգուշացէք ձեր բերանին, որ ակամայ սիսալանքով անպատշաճ խօսք չինոսի այդ մասին։ Ուրիշի կրօնի քամակից մի գնացէք։ ձեր կրօնը նոյնպէս մարուր է և Ռւդղափառ։ չար խօսքերու և ամբարիշտ մարդերի կրօնական քննութեններին ականջ մի գնէք։

Ընդհանուր պարտականութիւն է սիրել մարդկութիւնը, բայց իւր ազգը սիրել յատուկ և սեփհական պարտականութիւն է։ պատճառ իւր ազգի մարդկութիւնը առաւելապէս մօտ է իւրաքանչիւր մարդու։ Խնչպէս անհաճոյ էր ձեզ, եթէ մինը մի անձնական զրկանք հասուցանէր ձեզ, այնպէս վշտացէք, եթէ այդ զրկանքը հասանի ձեր Ազգին։ Խնչի որ դուք ևս այն ազգի որդիքն էք, նորա պատուին և անարդանքին հարկաւորապէս բաժանորդ։ և մի մարդու առաւել պատիւ է, եթէ նա իւր ազգութիւնը յարգելի կացուցանելով, յարգելի առնէ իւր անձնը։ Թողուրիշի ազգի պատուաւոր լինելը և ձեր ազգի անպատօնութիւնը ամեննեին պատճառ չ'տայ ձեզ մտածելու, փոխել ձեր ազգը, այսինքն միանալ մի այլ ազգի հետ։ այդ մի անբնական բան է, սիրելի երեխայք։ ամենայն բոյս իւր հողի վերայ կարող է աճել և պահել իւր գոյութիւնը և տիպը, իսկ տնկելով նորան այլ հողի վերայ, ինումենք նորա սեպհականութիւնը և օտար հողը նորան անբնական լինելով, հարկե հարկ կը նի հարացնէ և կը չորացնէ նորան։ Դուք եթէ աշխատէք, գուցէ թէ մի երես լի մարդ դառնաք ձեր ազգի մէջ։ այն ժամանակ օտար ազգը ևս կը պատուէ ձեզ և ձեր ազգը։ ապա թէ դուք օտար ազգի հետ միանաք, նորա մէջ կը կորսվիք և չէք ստանում ոչ անձնական և ոչ ազգային պատիւ, այլ մի կեղտ կը բերէք ձեր վերայ։ այսինքն ձեր ազգի առաջն ուխտադրութ լինելը։ այս պատճառով և ձեր ազգը և օտարը ձեզ անարգելու տեղիք կը ստանայ, Զգոյշ կացէք, սիրելի երեխայք, այլ այս օրիցս զրեցէք ձեր սրտի մէջ սիրել և պատուել ձեր Ազգը։ ով որ իւր ազգը կը պատուէ, կը սիրէ, ասել է, թէ իւր ծնողը իւր ընկերը կը սիրէ, իսկ ով իւր ծնողը և ընկերը կը սիրէ նա և Աստուած կը սիրէ, և Աստուած ուրախ կը լինի և կը բնակի այդպիսի մարդու մէջ։ նորա մէջ կը մնայ յաւիտեան և կը յաջողէ նորա բոլոր գործերը։

ՀԵՅԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԻՒԽԵՐ

Եմենայն մարդ իւր ազգաբանութիւնը իմանալու համար, պետք է, որ իւր հօր ազգաբանութիւնը իմանայ, այսպիսի քննութիւնը յառաջ տանելով, մարդը կը հասանէ իւր ազգի, ինչպէս խորենացին ասումէ, ծայրին:

Քննութիւնը, որ պարզումէ մեզ, թէ ով էր իմ հայրը, հօր հպար, նորա պապը և այլն և ոյլն, ասվումէ պատմութիւն, Եմենայն ազգի համար իւր պատմութիւնը ասվումէ ազգային պատմութիւն, Ուրեմն մեր, Հայերին համար, եթէ կամենք իմանալ, ուսանել մեր հայրը, պապը, նախահայրը և այլն և այլն, պետք է ուսանել Ազգային պատմութիւնը, Կոր ազգային պատմութիւն ուսանելը մեծ պարտականութիւն է ամենայն ազգի որդոց համար, պատճառ ինչ ամօթալի բան էր, եթէ մի զաւակ չ'իմանար և չ'ձանաչէր իւր հայրը ու մայրը, իւր եղբարբը և ազգականը, Այսպէս, սիրելի երեխայր, ձեր վերայ մեծ պարտականութիւն կայ ուսանել ձեր ազգի պատմութիւնը, գոնէ այնքան, որքան կարելի էր, պատճառ, մեք չունենք զեռ ևս լիակատար պատմութիւն, ինչ որ մինչև ոյժում պատմութիւն անունով զրել են զանազան մարդիկ, դոքա պատճական արժանաւորութենից զբկված բաներ են, Այս բանի մէջ մի դաւորքը, միայն զրողքը չեն, այլ և մեր ազգի կեանքը, որի վերայ խօսելը թողումնք այլ անկողմապահ հեղինակների, և յօյս ունինք, որ զուցէ մօտ ժամանակներումն մեր ազգաւոր և ճշմարտապէս ազգի վերայ սիրտ ցաւեցնող զերապախ Կազարեանց Վարդապետը, ձեռք տայ այդ զործին և զնէ մեր ազգի առաջնորդ կողմապահութեան, ամենենին լուսաւոր զաղափարներով, նորա անցած ու գնացածը, ոոցա հետեւանքը թէ փառքը և թէ նախաբնքը:

Վեր զիտաւորութիւնը պյու տեղ, սիրելի երեխայր, ոյն է, որ համառօտ և կարճ ծանօթութիւն տանք ձեզ մեր ազգի վերայ, որքան կը ներէ մեր զբքի խորհուրդը, մեք մեր կողմից, պատմութիւն զրել չենք համարձակվում և մասծել անգամ, Վի միայն պիտի տեսանենք ձեր հետ պյու տեղ, սիրելի երեխայր, մի քանի անցքեր, մի քանի մարդիկ, որոնց միշատակը ձեր համար միշտ պիտի սուրբ լինի:

Հայոց ազգի սկսանելու պատմութիւնը հիմնված է մի քազգեական պիտի թարգմանութեան վերայ, որ կատարվեցաւ Մարիբաս Կատինայի ձեռքով, մինչ սկսվելով Արշակունեաց թագաւորութիւնը, Վա-

զարշակ, Արշակունեաց ցեղից առաջին թագաւորը, կամեցաւ իմանալ այս ազդի պատճեն թիւնը:

Ա աղարշակ թագաւորը, ուղարկեց Մարիբաս Կատինային Պարսկաստան իւր եղքօր Արշակի մօտ, որ Պարսից թագաւոր էր. ինչպէս զրում Ավակս Խորենացին, հետեւեալ նամակով:

« Վրշակ, երկրի և ծովի թագաւոր, որի անձնը և պատկերը, իսկ աստուածների (անձնը ու պատկերը) իսկ բաղդը և պատաշները ամենայն թագաւորներից վեր, և մորի լայնութիւնը պյուշափ, որչափ երկնվի լայնութիւնը երկրի վերայ. Ա.աղարշակ քո փոքր եղբայրը և նիկակիկիցը, որ քո ձեռքով կարգած է Հայոց թագաւոր (ասումէ) ողջ եղիք ամենայն յաղթութիւնով:

« Որովհետեւ պատաւէր ստացայ Քեղանից քաջութեան և իմաստութեան հոգաբարձու լինել, ոչինչ ժամանակ քո խրատի մատին անփշչթ չլինելով, այլ խնամ տանելով, ամենայն բանի հոգացի, որքան իմ միաբը և հասողութիւնը կարող էր:

« Եւ այժմ քո խնամակալութեան միջնորդութենով զրված թագաւորութիւնս, խորհուրդ զրի մաքում իմանալ, թէ ինչ մարզիկ ինձնանից յառաջ աիրող են եղած Հայոց աշխարհին և ինչ տեղից են Նախարարութիւնքը, որ այս տեղ կան: Պատճառ, ոչինչ կարդ եղած այս տեղ յայտնի չէ և ոչ մէ հետաների պաշտամունքը և այս աշխարհի գլխաւորներից ոչ առաջինն է յայտնի և ոչ վերջինը և ոչ մի այլ բան օրինաւոր, այլ ամենայն բան խառն ի խուռն և վայրենի:

« Եւ սպամառով աղաւումմ՝ քո Տէրութիւնդ, որ հրամայես արքունի զիվանդ բանալ այս Քո հզօր Տէրութեան մօտ եկող նարզու սուածն, որ քո եղքօր և որդու ցանկալի բանը գտանելով, շուտով բերէ սուզզը և մեր հեշտութիւնը, որ յառաջացած էր կամակատարութենից, լաւ զիտեմ, որ Քեզ խնդութիւն կը լինի: Աղջ եղիք, ասաւածների մէջ բնակութենով երեսիլով: »

Վրշակ թագաւորը այս նամակը ստանալով Մարիբաս Կատինայի ձեռքից, հրամայեց բանալ նորա առաջեւ Նինուէի թագաւորական զիվանը: Մարիբասը, որտեսելով զիվանի մէջ, դառն Հելեն լիզուով մի զիրը, որ Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով Քաղցկական լեզուից թարգմանված էր գէալ ի Յոյն: Այս զրի միջից Մարիբասը հանեց միայն մեր Հայոց պատճեն թիւնը և բերեց Ա.աղարշակին Ածրին քաղաքում, Յոյն և Ասրի զրով:

Վհա այս զրբի հիմն վերայ զրումէ Խորենացին իւր պատճեւ թիւնը: Բայց ինչպէս ամենայն հին ազգերի և մինչև անգամ մի քանի նոր ազգերի մէջ, Նոյնպէս և Հայերի մէջ պատճեւ թիւն սկիզբը կ'էս մի խառն է զիւցարանական պյարանութեններով և քննութեան արժանի խնդիրներով: Այս խօսքերը մեք առումնելք առանց նայելու մի քանի նեղսիրա հեղինակների զրուածներին, որոնք աշխատումն ազգութեան և լիզուախոսութեան առաջնութիւնը խել ուրիշ այլ ազգերից:

Ուր կարծումնելք, որ բովանդակ աշխարհի երեսին պատահած իրողութիւնը և տեսակ տեսակ հնութենների յիշատակարանը, ովքը և որ Քաղցկական յիշատակարանի շափ արժեք ունենան փոքր ի շատէ խելապատակումը բանականութիւն ունեցող մարդերի համար: Յանկանումնելք, որ այս խնդիրը ամեննեին լուսաւոր գաղափարներով քննվէր և արժանի քան լինելը լուսաւորեալ Աւրորացոց առաջն կարգալու առանց կարմիրներու և ամաչելու: Բայց մեք որ ինչպէս ասացինք, չենք համարձակվում ևս անզամ մոտած և Հայոց պատմութիւն զրելու, նոյն ովք առումնելք, որ այս խնդիրները վճռել ևս յանձնառու չենք: Այս պատճառով, հիններին հետեւելով, մեք համառու ծանօթութիւնը ազգային պատճեւնան վերայ սկսանումնելք այսպէս:

ՆԱԽՆԻ ՀԱՅԻԱԶԱՆՑ ԻՇԽԱԿԱԳԻԹԻՒՆԸ:

Յ քհեղեղից յետոյ մինչ Կոյի սերունդը ընակվումին Առ բեստանի կողմէը, և մինչ աշտարակաշնութենից յետոյ Ասորեստանի Տէրութեան հիմնադիր, Քէլը, որ և Կերրովով է կաչվում, կամեցա իւր ձեռքի՝ տակ հնազանդեցնել բոլոր մարդիկը, Հայկ, քաջ և արի իշխանը, որ Կոյի Յարեթ որդու թոռի ազանէր, չկամելով հնազանդ վել Աւելին, որ իւր անձնը թագաւոր և աստուած էր քարոզում, իւր ազգականներով և կողմանակիցներով մատ իր երեք հարիւր հոգու շափ, զնոց գետ ի հիւսիսացին կողմերը և այն տեղ գեղեր շնուրով հնազանդեցուց թիքեան այն աեզի ընակիչը, որոնց վերայ կառավարիչ կարգեց իւր որդիրը և թոռները:

Վայս բանը պատահած է Քրիստոսից 2350 տարի յառաջ, Աւելը որ ցանկանումք, որ ինքը իշխան բոլոր մարդերին, իւր տէրութիւնը բարելոնի մէջ հաստատելուց յետոյ, մարդ ուղարկեց Հայերն և Հրա-

միրեց, որ թողու այն ցուրտ երկիրները ու զնայ Ասորեստան, այսինքն հնագանդվի Բէլին. բայց Հայկը լու ճանաւելով Իւլին կամ զուցելու և հասկանալով, թէ Ի՞նչ ասել է ազատութիւնը և անկախութիւնը, այլև մի ազգի իւր սեպհական տէրութիւնը, չընդունեց Իւլի հրաւերը:

Իւլը յանդդնութիւն համարելով Հայկի ընթացքը, պատերազմ գուրս եկաւ Նորա վերայ շատ զօրքով, բայց Հայկը քաջութեամբ դէմ զնելով իւր սակաւաթիւ զօրքով բանաւորի յարձակմաննքին և այն ժամանակի տեսութեամբ, տեղեակ լինելով պատերազմական կարգերին, այնպէս կարգեց իւր զօրքը, որ ոչ թէ միայն չ'վեասվեցաւ, այլ ինքը իւր ձեռքովը, իւր երեքթեան նետով սպանելով բանաւորը, բոլոր նորա զօրքը ցիր ու ցան տարաւ:

Վ.յս յաղթութենից յետոյ, Հայկը պատերազմի տեղումը մի քաղք շինեց և անունը զրեց Հայք. այս քաղքի պատճառով բոլոր զաւատի անունը Հայոց Չոր անուանվեցաւ: Հայկ, յայտնի չէ, թէ որքան տարի կառավարեց. միայն Հայոց միշատակարաններին նայելով, պիտոյ է մեք ևս ասենք, որ շատ տարիներ կառավարելուց յետոյ մեռաւ, բոլոր ազգը իւր Արմենակ որդու կառավարութեանը յանձնելով:

Վ.յս կերպով ահա սկսածումէ Հայոց տէրութիւնը, որի իշխանները մինչև Պարսյրը կառավարումէին ազգը Նահապետական կերպով: Խակ Պարսյրից սկսած կառավարողք անուանվեցան թագաւորք, որովհետեւ առաջին անգամ Պարսյր Նահապետը Մարաց Ափարսար Ա. թագաւորին օդնութիւն զնալով, Ասորեստանի Սարդանարալ թագաւորի ընդդէմ, յաղթութենից յետոյ թագ ստացաւ Ափարսարից:

Վ.յս թագաւորութիւնը Քրիստոսից 330 տարի յառաջ Ա.ահեւթագաւորի օրովք կործանվեցաւ. Ալեքսանդր Մակեդոնացու ձեռքով, որ Պարսից աշխարհին տիրելով, տիրեց և Հայաստանին:

Վ.յս օրից մինչև Արշակունեաց թագաւորութեան սկիզբը, այսինքն Քրիստոսից մինչև 150 տարի յառաջ, ուրեմն 180 տարի ժամանակ Հայաստանը կառավարվեցաւ կուսականների ձեռքով:

Հայկից սկսած մինչև Մակեդոնացոց Հայաստանին տիրելը, Հայոց երկիրը և ազգը կառավարվեցաւ Հայ Նահապետների և թագաւորների ձեռքով, մի միայն միանգամ Արայի մահից յետոյ, որ մեռաւ պատերազմումը, որ բացել էր Շամիրամը, Ասորեստանի թագուհին, ընկաւ Ասորեստանի ձեռքի տակ և անուանվեցաւ գաւառ Ասորեստանի, չը նայելով որ Շամիրամը նոյն իսկ Արայի կարգաս որդին Արայ անուա-

նելով, թագաւոր կարգեց Հայոց վերայ Հայաստանի Ասորեստանից այս կախողութիւնը վերջացաւ, մինչ Պարոյրը թագաւորեց. Մարաց պիաքսար թագաւորի հետ Ասորեստանի տէրութեանը յաղթելով և նորա Կինուէ մայրաբաղարը առնելով: Ժամանակը, որ ընկած է Հայկից մինչև Վաչէ, ոյսինքն, մինչև Ալեքսանդր Մակեդոնացու Հայաստանի տիրելը ասվումէ «Ժամանակ իշխանութեան նախնի Հայկազանց»:

ԱՐՃԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԴԱՏՈՐՈՒԹԻՒՆԸ.

Ա, ախնի Հայկազանց իշխանութիւնը Մակեդոնացոց ձեռքով վերջանալուց յետոյ, ընկաւ Մեհրանի կուսակալութեան տակ, որ Ալեքսանդր Մակեդոնացին կարգեց բայց Ալեքսանդրի մահից յետոյ, մինչ բոլոր թագաւորութիւնը բաժանվեցաւ նորա զօրապետների մէջ, Հայաստանը Կէոպտոլոմէոսի բաժինն ընկաւ: Այս կերպով, մինչև Պարթեների Հայաստանի տիրելը ազգը կառավարվեցաւ Մակեդոնացի կուսակալների ձեռքով:

Մեծ Արշակ, Պարթեների թագաւորը, Ասիայի շատ մասին տիրելուց յետոյ, տիրեց և Հայաստանին, որի վերայ թագաւոր զնելով իւր Վաղարշակ փոքր եղբայրը, նորոգեց Հայոց թագաւորութիւնը, Քրիստոսից 150 տարի յառաջ: Այս կերպով ահա վերստին սկսվեց Հայոց թագաւորութիւնը Պարթեների Արշակ թագաւորի ձեռքով, որի անունով ևս այս թագաւորութիւնը անուանվեցաւ Արշակունիաց:

Եթէ Հայաստանը իրեւ տէրութիւն ունեցել է փառք ու պարծանք, պյտ Արշակունիաց թագաւորութեան ժամանակը: Վերևումը Բնապէս ասացինք, Վաղարշակը առաջին անգամ ձեռք զարկեց գտանել ազգային պատմութեան մասին ծանօթութիւններ, և գտանելուց յետոյ մ.ծ խնաւըրով կարգեց նախարարներ և նշանակեց նոյցա պաշտօնը: Բաց ի սոցանից շատ օդտակար տնօրինութիւններ արեց վերաբերութեամբ դէպ ի բոլոր տէրութիւնը — Ազգը և պայտը: Արշակունիաց թագաւորութեան ժամանակ Հայոց ազգը լուսաւորվեցաւ Սուրբ Գրի գորի ձեռքով Քրիստոսական Հաւատով: Արշակունիաց թագաւորութեան վախճանումը, գտանվեցան Հայոց զրելը և սկսեց Ազգային մատենագրութիւնը:

Վայո թագաւորութիւնը 583 տարի տևելուց յետոյ Երտաշիր, Արշակունեաց վերջին թագաւորի օրովք, Քրիստոսի 433 թուականին վերջացաւ. Հայոց նախարարների աթասատանութեամբ, Պարսից Վասար թագաւորի ձեռքով, որ խելով Երտաշիր թագաւորութիւնը և Սուրբ Սահակի կաթողիկոսութիւնը, արդելեց նորանց Պարսկաստանի մէջ. իսկ թագաւորի փոխանակ կարգեց մարզպաններ Հայոց աշխարհի վերայ և Սուրբ Սահակի փոխանակ Առուրմակ քահանայն կաթողիկոս։

Վրշակունեաց թագաւորութեան կործանմանից յետոյ մէր խեղճ հայրենիքը խաղալիք դարձաւ բաղդի ձեռքումը. տարակօյս չկայ, որ այս բարի պատճառն էր դարձեալ մէր աղքայինների անմիաբանութիւնը և անսիրութիւնը, որ իւր կարգով յառաջանումէր աղդի անուսումն և անկիրթ լինելուց։

Հայրենիքը, կորուսանելով իւր թագը և գայիսոնը, ընկաւ մարզպանների կառավարութեան տակ. Պարսից դժոխային և օձախորհուրդ քաղաքականութեան չնորբով արտասուրի ծովեր թափեց իւր աչքից այրիացած Հայաստանը. Խնչովէս աշխարհի պյլ ամենայն բռնակալական տիրապետողների, այնովէս և Պարսից տմարդի քաղաքականութեան մի տարրը ևս ոյն էր, որ Հայոց աղդը կուլ զնաց Պարսկականութեան մէջ, որով օրովէս միամուր ապառաժի վերայ պիտի հաստատվէր Պարսից իշխանութիւնը Հայաստանի վերայ։

Իսկ մի աղդի ազգութիւնը կուլ տալու և ոչնչացնելու համար, պիտոյ է խորտակել պյտ աղդի հաստատ մեալու երեք սիւները. առաջինը թագաւորութիւնը, երկրորդ կրօնը և երրորդը լեզուն. սոքա են այն հիմքերը, որոնց վերայ շինվումն և հաստատվումն աղդութեան շինուածքը։

Վայո միջոցին Հայաստանը զրկված էր թագաւորութիւնից. մեռմէր խորտակել երկու միւս սիւները. կրօնը և լեզուն. Վայո պատճառով Յաղկերտ երկրորդի ժամանակ Պարսից տէրութիւնը մէծ հալածանը հանեց Քրիստոնէական կրօնի վերայ։

Վայո հալածանը սաստկացաւ և առաւել ծանր եղաւ Հայաստանին մի քանի ուրացողների ձեռքով, որոնց զլխաւորն էր Վասակ Սիւնի իշխանը։

Քրիստոսասէր իշխանը, որոնց զլուխն էր Վարդան Մամիկոնեան սպարապետը, հետեւ լով իւրեանց սրտի մաքուր և վերին աղդեցութեանը պյլ բորբոքվելով Սուրբ Յովուշի կաթողիկոսի և Ղեղոնդեան քահանաների անդուլ և Ըւետարանական քարոզութեններից, ընդդէմ դուրս եկան այս մադական կրօնի տարածութեանը Հայաստանի մէջ և

պաշտպան քրիստոսական կրօնի : Շատ և անտանելի չարչարանքներ կրելուց յետոյ, վերջապէս վերահասու եղան, որ ոչինչ բանով չէ կարելի զիմանալ մոգութեան ընդդէմ : Վասն որոյ պատրաստվեցան քրիստոնէական քաջութեամբ իւրեանց պատուական և աղնիւ արիւնով վերստին կնքել Հայաստանի քրիստոնէական կրօնը և թափած այդքան աղնիւ մարգերի արիւնը թողուլ ապագայ եկողների համար, որպէս մի յաւիտենական միջնորդ, մի անցանելի վեհ քրիստոնէութենից դէպ ի մոցութիւն : Այս մեծ պատերազմ էր, որ յայտնի է մեր պատմութեան մէջ անունովս «Վարդանանց», ուր անկաւ սուրբ Վարդանը իւր աղջականներով և աղջով, որոնց թիւը հասանումէ մինչև հաղարեսուն և վեց :

Այս անցքը հրաշալի սղաւորութեամբ նկարագրված է Եղեշէ Սուրբ Վարդապետի գրչով : Ախաման որ անմօտենալի է առ հասարակ աղջին այս ընաշխարհիկ աշխատութիւնը իւր լեզուի հնութենովը, ցանկալի էր, որ մեր պատուելի հեղինակները աշխատէին մեր հին հեղինակութիւնքը վերստին տալ ժողովրդին ժամանակի յարմար լեզուով :

Ենիշխանութեան ժամանակ, այսինքն Արշակունիաց թագաւորութեան կործանմանից մինչև Բագրատունեաց թագաւորութիւնը Հայաստանը ենթարկվեցաւ նախ Պարսից, ինչպէս ասացինք, ապա Հազարացոց, որոնց ոստիկանները ևս նոյնպէս չարչարեցին մեր ողբալի և արտասուելի աղջը, մինչև որ նախախնամութիւնը երրորդ անգամ զբթացաւ մեր աղջի վերայ, որին հասել էր նորա արտասուքը և բողոքը և հանեց Բագրատունեաց թագաւորութիւնը :

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ :

Վարդպանները և Աստիկանները, որոնցով կառավարվում էր Հայաստանը Պարսից և Հազարացոց իշխանութեան տակ, շատ անգամ լինումէին Հայ իշխանք. այս կառավարութիւնը անցաւ վերջապէս Աշոտ առաջին - Բագրատունի իշխանի ձեռքը, որ բարւոք ինսամն լով աղջը իւր հօրը Բաղդադ զնալուց յետոյ, շահեցաւ բովանդակ աղջի սերմը և հոգին : Այս բանը պատճառ տուեց Հայոց իշխաններին, որ միաբան կամ ցողութեամբ թագաւոր դնեն Աշոտ առաջինը իւրեանց վերայ, որպիսի մոտագրութիւնը յայտնելով Հազարացոց ամիրագիտին :

աղաջիցին, որ յօժարի այս դիտաւորութեանը, այն պայմանով, որ նոր թագաւորը իւր բոլոր ազգով հնաղանդ մնայ ամիրապետի հրամանին: Ամիրապետը ճանաչած լինելով Աշոտի արքանաւորութիւնը, համաձայնեցաւ այս բանին և Յիսէ Աստիկանի ձեռքով ուղարկեց Աշոտին Անի քաղաքի մէջ թագ և թագաւորական զգեստներ: Գրիդոր կաթողիկոսը մէծ հանդէսով կատարեց Աշոտի թագաւորական օծումը: Առա ձեռքով Հայաստանը տէր գարձաւ գարձեալ սեպհական թագաւորի և աղատվեցաւ բռնակալ կառավարիչների ձեռքերից:

Աշոտը թագաւոր լինելուց յետոյ, առաւել ևս ջանք գործ գրեց տէրութեան ողբալի վիճակը բարւոքելու և մխիթարելու խեղճ ու անտիրական աղջը: Բարեկամութիւն բացեց մօտակայ Լեռնականների հետ, որոնք յառաջ ստեած ասպատակումէին Հայաստանը և իւր որդու ձեռքով շիջուցանելով Աննանդ գաւառի մէջ ծագած իշխանների երկպառակութիւնը, կարելի կերպով կարգի բերեց Հայաստանը:

Այս բաներից յետոյ զնաց Փաքր-Հայոց մէջ և Յունաստան, յետոյ Կոստանդնուպոլիս մտանելով, մէծ բարեկամութիւն, սէր, արքայական թագ և գայիսոն ստացաւ Յունաց Արշակունի Վասիլ կայսրից և նոյն պատուով Հայաստան վերադարձաւ: Բայց հասանելով Քարսպառ ասված տեղը, սաստիկ հիւանդացաւ և մէռու: Նորա մարմինը Գէորգ կաթողիկոսի յուղարկաւորութեամբ մէծ հանդէսով բերվեցաւ Հայաստան և թաղվեցաւ իւր հարց գերեզմանների մէջ: Առա մահից յետոյ թագաւորութիւնը անցաւ ժառանգի ձեռքը, այսինքն Աշոտ առաջինի որդու, Ամեատ առաջինի ձեռքը:

Իսպատունեաց թագաւորութեան վախճանը ողբալի եղաւ, թէպէտ և ամենալյն ցեղի վերջը այսպէս էր, բայց մանաւանդ ողբալի ասումնիք նորա համար, որ Յունաց Խարզախօսութեան և բռնակալական հոգու հետ միացաւ մէր ազգայինների անքրիստոնեաց և բարրարոսական անհաւատարմութիւնը և դարձանակալութիւնը գէպի իւրեանց հարազատ թագաւորը:

Վոհասարակ Բագրատունեայց թագաւորութեան ժամանակ Հայաստանի վիճակը, ինչպէս և անիշխանութեան ժամանակ, շատ գառն եղաւ: անդադար պատերազմէրը քամնցին ազգի ոյժը և կարողութիւնը, զօրացաւ անհաւատարմութիւնը և անիրաւութիւնը, համարեաւ թէ խմբեցաւ մատնութեան և դաւաճանութեան հոգին իշխանների սրտումը, որով և վերջապէս կործանվեցաւ և այս թագաւորութիւնը:

Բայց որովհետեւ արժանի է հարցասիրութեան այս անցքը, վաս որոյ մի փոքր մանրամասն զբեցինք, որպէս զի ամենայն երեխայ լա սովորելով, գոնէ երախտագիտական ջերմ արտասուրով պատուափրէ իւր բագրատունեաց վերջին թագաւորի Գաղիկ երկրորդի միշտակը և իւրատ և օգուտ քաղելով այս անցից, սովորի ճանաչել իւր ազգի վերայ սիրտ ցաւեցնողները, նոցա քաշած վիշտը և տառապանքը ազգի փրկութեան համար և վատ մարդերի անպիտանութիւնը, յառաջացած անբարոյականութենից :

Եսովհաննես Սմբատ, Բագրատունի թագաւորը, վերջին Գաղիկ երկրորդի հօրեղբայրը, իւր մոռանելուց յառաջ ձեռագիր էր տուած Յունաց Միքայէլ Մոնոմախո Եւ կայսրին — Քիւղանդական տէրութեանը թողուէ Անին իւր շրջակայ գաւառներովը, երբ ինքը մոռած էր : Այս բանի վերայ Սմբատի մահից յետոյ Միքայէլ կայսրը դեսպան ուղարկեց Հայաստան և պահանջեց, որ կատարվի թագաւորական խոստումը Հայերը յանձնառու չեղան կատարել այս բանը, վասն որոյ Միքայէլ կայսրը երեք անդամ Հայոց վերայ ահազին բանակ ուղարկեց, որնք չարդեցին և փշորեցին Հայաստանի շատ տեղերը. վերջումը չորրորդ անդամ յարձակվեցան Յոյները հարիւր հաղար զօրքով և պաշարեցին Անի քաղաքը, որի մէջ կար երեսուն հաղար զօրք : Այս երեսուն հաղար զօրքը Վահրամ Սպարապետի առաջնորդութեամբը դուրս յարձակվեցաւ քաղաքից թշնամու վերայ և ահազին ջարդ տալուց յետոյ, փախցրեց Յունաց մէծ բանակը, որ կորուց պատերազմի դաշտումը քսան հաղար մարդ :

Վայս յաղթութենից յետոյ Վահրամ՝ սպարապետը իւր հետ միաբան նախարարների և գեհետոս կաթողիկոսի խորհրդով Սմբատի եղբօր որդի, Գաղիկ Բ. Խելացի և կտրիճ երիտասարդը թագաւոր օծեցին : Այս անցքի վերայ հաղին թէ անցել էր մի տարի ժամանակ, Յունաց Միքայէլ կայսրը մոռաւ և նորան յաջորդեց Կոստանդին կայսրը, որ զրգութելով Հայոց Սարգիս անունով Նենցաւոր և խարդախ իշխանի ձեռքով դեսպան ուղարկեց Գաղիկին և պահանջեց Անի քաղաքը, ինչ պէս խոստացած էր նորա յաջորդ Սմբատ թագաւորը : Գաղիկը յանձն շառաւ այս, վասն որոյ Յունաց զօրքը զարձեալ մտաւ Հայաստան՝ բայց Հայոց զօրքը, առաջնորդվելով իւր խմաստուն և կտրիճ թագաւորի ձեռքով, զարկվեցաւ այս բանակի հետ և փախուց նորան կոստանդինը տեսաւ, որ այս Ճամապարհով չէ կարող հասանել իւր փափին, ձեռք առաւ իւր Յունական խորամանկութիւնը. մի սիրոյ և խաղաղութեան նամակով հրաւիրեց Գաղիկին, որ սա զնայ Կոստանդնուովիս, որպէս թէ կայսրի ցանկութիւնը էր մի միայն տեսանել նորան :

և թէ այս տեսութենից յետոյ ազատ թողնելու էր Հայոց թագաւորութիւնը որդոց օրդի: Գագիկը չկամքր այս առաջարկութիւնը կատարել, բայց Սարդիսի իշխանը իւր նենդաւոր ընկերների օղնութենով ամենայն ջանք գործ դրեց Գագիկը հաւանեցնելու և վերջապէս յաջողեցաւ նորան. Խարերայ դաշնագրութենից յետոյ, որ գրել էին սուրբ Խորհրդի բաժակով և Պետրոս կաթողիկոսի վկայութեամբը, Գագիկը դուրս եկաւ Անի քաղաքից բանալիները տալով Պետրոս կաթողիկոսին:

Երբ Կոստանդնուպոլիս հասած էր Գագիկը, պատուով ընդունեցին նորան և կայսրը նկըր ևս կեղծաւոր սէր ցոյց տուեց առաջին անգամը. յետոյ ցած դնելով դիմակը, պահանջեց, որ Անի քաղաքը տայ իւրեան. Երբ Գագիկը չցուժարեցաւ, այն ժամանակ կայսրը արդելեց նորան մի կղզու մէջ:

Պետրոս կաթողիկոսը տեսանելով, որ Անին ձեռքից պիտի երթայ, թուղթ գրեց Սունտւատի Յոյն իշխանին. «Իմէ ես Անին իւր բալը երկիրներով տամ Յունաց կայսրին, փոխարէնը Բնէ կ տայ կայսրը»:

Կոստանդնուր իւր իշխանի ձեռքով խմանալով կաթողիկոսի կամքը, շատ արծաթ և պատիւ ուղարկեց Պետրոս կաթողիկոսին և նու զաւաճան նախարարների ստորագրութեամբ հանդերձ Անի քաղաքի Յունատանին յանձնալիու թուղթը ուղարկեց կայսրին. Երբ կայսրը այս թուղթը ստացած էր, ցոյց տուեց Գագիկին, թէ աչա կաթողիկոսը և բոլոր նախարարները իւրեանց յօժարութեամբ յանձնումն Անին Յունատանին. Գագիկ պատասխանեց, թէ չէս եմ Հայաստանի և Անի մայրաքաղաքիս տէրը և իշխանը. այդ քաղաքի ձեզ յանձնելը չեմ ընդունում»: Կայսրը երեսուն օր անդադար համովելուց յետոյ, վերջապէս Գագիկը համաձայնեցաւ, մի կողմից տեսանելով իւր իշխանների դաւաճանութիւնը և միւս կողմից, որ կարողանալու չէ զուրս զալարգելանքից: Անի քաղաքի փախանակ տրվեցաւ Գագիկին Պիզու և մի քանի այլ քաղաքներ, ուր զնաց Գագիկը:

Կայսրը Գագիկի հաւանութիւնը առածովը, Պարակաման զօրապետը Ներքին զօրքով ուղարկեց Հայաստան, որ բուռութեամբ տիրեց Անի քաղաքին. պատճառ, թագաւորին հաւատարիմ մեացած զորքը յօժար չէր յանձնել օտար թագաւորի իւր սեպհական մայրաքաղաքը:

«Գագիկը Յունատանի մէջ մնալով, նոցա խարդախ և նենդաւոր իշխանների ձեռքով խեղդվեցաւ անարգաբար, որի մէռած մարմինը մի ամիող օր կախված մնաց բերդից»:

Վազար կերպով վերջացաւ և բազրատաւնեաց թագաւորութիւնները և Հայաստանի նոր ի նորոյ թէւատրոն դարձաւ սարսափելի և պատառաւելի անցըքերի :

ԹԱՊԻԹԵՆԵԱՆՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆԵՐԸ:

Վազիկ թագաւորի ազգականը թուրքն անունով քաջ իշխանը, որ ներկայ էր Պազիկի ցաւալի վախճանին, սիրտը սաստիկ ցաւելով այլ և նախանձով բորբոքվելով, Յունաց բնդդէմ զնաց Կիլիկիայ Տաւրոսի արերը և այն տեղ միացնելով իւր հետ զտանված Հայ իշխանները և զորքը զուրս վանեց Յոյները և ինքը տիրապետեց: Այս անունով սկսած վերջին թագաւորութիւնը, որ և այս իշխանի անունով անուանվեցաւ Թուրքնեանց: Կորա յաջորդքը նոյն ոգւով առաջնորդվելով պաշտպանեցին ազգը մինչև Լևոն Բ., որ թագաւոր օծվեցաւ:

Դայց Թուրքնեանց թագաւորութիւնը, համեմատութեամբ միւս թագաւորութեններին մի շատ փոքր, անզօր բան էր և այս սպատճառով ենթակայ ամենայն բոլք Հաղարաւոր ցաւերի, ինչպես նաև նորա վախճանը ցոյց է տալիս, որ պատահեցաւ Լևոն Զ.-ի օրովք, որ վերջում՝ 1393 թուականին, Փարիզի մէջ մէռ ու առ, զերութենից աղաւմելուց յետոյ:

Հատ համառա և հարեւանցի ծանօթութիւնքը մէք անխորհըրդարար չդրեցինք այս տեղ այլ մանաւանդ այն մոքով, որ Հայոց մանուկը առաջն անգամ կարդալ սովորելով, մասնաւոր ծանօթութիւն ստանայ իւր ազգի սպատմութեան վերայ և աշխատի իմաստնանալ և լուսաւորվել, որովհետև բոլոր մէք ազգային սպարադութիւնքը յառաջած են տղիտութենից, որի հետեւանքն էր անբարոյականութիւն, իւր սարսափելի մալութեններովը:



ՃԵՄԱՆՑԵԿԵ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քից յա- ռաջ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆ- ՆԵՐԸ	Քից յա- ռաջ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆ- ՆԵՐԸ
2350	Հայկ.		Արբուն.
2000	Արմենակ.		Հոյ.
	Արմայիս.		Յուսակ.
	Ամասիա.		Կայսարակ.
	Գեղամ.	680	Մկայորդի.
1350	Հարմայ.		
1300	Արար.		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԴԱՆՈՒՐ- ՆԵՐԸ
	Արայ Գեղեցիկ.		
	Կարգոս.		
	Ընուշաւան.	640	Պարոյր.
	Պարէտ.	600	Հրաչեայ.
	Արբակ.		Փառնուաս.
	Զաւան.		Պաճոյձ.
	Փառնաս.		Կռոնակ.
	Սուր.		Փաւոս.
	Հաւանակ.		Հայկակ թ.
	Վաշտակ.		Երուանդ Ա.
	Հայկակ Ա.	570	Տիգրան Ա.
	Ամպակ.	530	Վահագն.
	Առնակ.		Առաւան.
	Ծաւարչ.		Կերսեհն.
	Կորպյր.		Զարեհն.
	Վատասկար.		Արմնդ.
	Գոռակ.	405	Տերիքազ կռւսակալը.
	Հրանտ.		Բագամ.
	Ընձար.		Վան.
	Գղակ.		Վահե.
	Հաւրդ.	330	Հայկազանց թագաւորու- թեան ընջուիլը.
	Զարմայր.		
	Պերճ.		

Քից լրաց ուղի:	ՀԱՅԵԱՆՑԻԿԱՆ ԿՈՎՈՒՆՅԱՆ ԴԱՐԲԸ	Քից լրաց ուղի:	ԵՐՏԵՎԵՐՁՄԻ ԱՎՀԱՐԴ ԴԱՐԲԸ ԸՆԸ ԵՐՑ ՊԱՅ.
830	Աիշրան: Կենազարման: Երդուարգ: Երտուազ (Երտուազան): Երտուէն: Զաշրան: (Աւարիառեն) Աիշրուազան: Երտուազգ:	18 45 55 62 Քից լրաց ուղի:	Զինծու Երտաշէն: Երշակ: Աիշրդատ: Հասդամիզ: Երդտա: Աիշրան Դ: Երդտա Երկրորդ մեզամ: —
	ԵՐԸ ԱԿԱՆՆԵՐԻ ԹԵՇԻՆ: ԼՈՐԴՆԵՐԸ	33 3	Երշամբ: Երդտր:
150	Գաղարշակ Ա:	Քից	
128	Երշամբ Ա:	Քից	
115	Երտաշէն Ա:	աղի:	
90	Աիշրան Բ:	Քից	31 Երդտրին դարձը
88	Աիշրան Աւորոց թագաւոր քառականք:	Քից	35 Անանուն:
70	Աիշրանակերտի մաս եղան պատերզիք:	55 85	Անաւարուկ: Երտամեն Բ:
63	Աւորոց ազգաւաճիքը:	127	Երտուազգ Բ:
36	Երտուազգ:	130 151 193 213 257	Աիշրան Ա: Աիշրան Դ: Գաղարչ: Խոսրով Մհե: Սուրբ Գրիգոր լուսա որիք հնունդը:
	ԵՐՑԱԿԱԶՄԻ ԱՎԾԱՐՁ: ԴԱՐԲԸ ԸՆԸ ԵՐՑԱԿԱՅ ՊԱՅԱՐՁՄԱՆ	261	Երտաշը Հայտատանին ափ- րելը:
33	Երկրանդը:	286	Երդտա:
33	Երտաշը (Երտաշէն):	287	Ա. Գրիգորի վերասպնեամիլը:
20	Աիշրան Ա:	301	Համբաւիմեանց նաշտակու- թիւնը:
5	Աիշրան Բ: և Երտուազ:	301	Ա. Գրիգորի վերասպնեամիլը:
5	Երտուազգ:	318	Երդտամին ու Ա. Գրիգորին Հասմւ երթարք:
2	Աիշրան Բ: Երկրորդ մեզամ:	333 373 353 364	Ա. Գրիգոր վախճանումք: Խոսրով Բ: Աիշրան Բ: Արշակ:
Քից լրաց ուղի:	1 Արիստրազան: Երտուազգ: Աիշրան Դ: Երտուազ: Գաղարչ:		
15	Գ. մին:		

Գիր յիւ աց:	ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԿՐՈՒՅԹԻ ՆԵՐԸ, Շ. 018 ԱՐՏ. ՊԱՅ.	Գիր յիւ աց:	ՄԱՐԶՈՎԱՆԵՐԸ,
367	Ա. Ներսէս Մէծ:	600	Դասիթ Սահմառանի:
382	Պատու:	623	Դասիթ Սահմառանի Ափերա- պագաս:
391	Ա. արտազատ:	632	Ա. արտազատիրոց Ափերա- պագաս:
392	Արշակ Գ. և Ա. ազարչակ Բ.	656	Ամիստ Ափերապագաս:
396	Խոսրով Գ.:	659	Համեզարաց Մամիկոնեան:
399	Ա. Ասհակ Մէծ:	693	Հայոց ազգագույն միքրուլու- թիրիւ:
400	Ա. ամէշապուհ:	727	ԱՌԱԿԱՆԵՐԸ,
405	Հայոց գրերի պիւտը:	731	Արդյազիդ:
421	Խոսրով Գ. երեքրորդ ան- գամ:	742	Արտամ:
422	Ը. ապուհ պարսիկ:	743	Արդյազիդ:
427	Արտաշէս (Արտաշէբ):	758	Եղիտ Ա:
433	Արշակունիաց Բագաւորու- թիան գաղարիր:	760	Արքան (Ասհակ) Բագրա- տունի Պատրիկ:
	ՄԱՐԶՈՎԱՆԵՐԸ,	767	Ախուլյան:
435	Ա. եհշիմէրշապուհ:	786	Եղիտ Բ:
440	Ա. Ասհակի և Ա. Մելքոնի մանր:	792	Խոս զիւն:
	Գ. առակ Արևի:	803	Հուլ:
	Ապօքերարի հայածանիրը:		Բագրատ Բագրատունի:
451	Ա. արդանանց պատերազմի:	818	Պատրիկ:
	Ապրումիզ:	851	Աշոտ իշխանների իշխան:
454	Ա. ենդղեանց մարտիրոսու- թիւնը:		ԻՆԴԻԱՆԵՐԸ ԹԱ- ԳԱՆՈՒՆԵՐԸ,
461	Ասրդ շնուր:	885	Աշոտ Ա:
481	Ասհակ Բագրատունի:	889	Անքատ Ա:
482	Ը. ապուհ Միհրանեան:	908	Պազիկ Արեգունի, Ա. աս- պարականի Բագաւոր:
485	Անեկան:	919	Աշոտ Բ. Երկութ:
510	Ա. արդ:		
513	Բայրութ:		
518	Մէկ գնունի:		
	Դենշապուհ:		
551	Հայոց Բարձրանին հաս- տառակիր:		
552	Ա. շնառ Ա. աշխամ:		
	Ա. արտազատ:		
564	Առքէն:		
572	Ա. աւենձիմիր:		
592	Ամիստ Բագրատունի:		

Քէց յիշ- աց:	ԽԱՎՐԵՑԱԿՆԵՐԸ ԹԱ- ԴԱԼՈՒՆԵՐԸ,	Քէց յիշ- աց:	ՊԱՄՐԵՆԵՍՆՅԱՅ ԹԱԿԱ- ԻԱՐՆԵՐԸ,
928	Արտա	1220	Զապել թագուհի և Գիլիա- պոս.
937	Աշուա գեղենիկ Առաջարա- խանի թագաւոր.		Հայուսաման թաթարների իշխանութեան տակ.
952	Աշուա Գև Ազգաբան.		(1233—1340).
953	Արտասահման Համազասպ Առաջարախանի թագաւոր.	1226	Հեթում Ա.
961	Առշեղ Արտա քաղաքի մէջ թագաւորում.	1270	Լեռն Գ.
977	Արտօն Բ.	1289	Հեթում Բ.
990	Գաղիկ Ա. արքաների արքոյ.	1293	Թորոս Գ.
1020	Օսմաններ Ալիսա.	1296	Ամրատ.
1021	Առաջարախանի ԱԵՆերի- րիմ թագաւորը Աերաս- տիա և քաշվում.	1298	Կաստանդին Բ.
1040	Գաղիկ Բ.	1305	Լեռն Գ.
1045	Գաղիկի թագաւորութենից շրկուիլը.	1308	Օչին.
1079	Գաղիկ Ապանձում. Կարսի Գաղիկ թագաւորը. Առնաց երկիրը և քաշվում.	1320	Լեռն Ե.
	ՊԱՄՐԵՆԵՆԵԱՆՆՅԱՅ Ի. Տ. Խ. Ա. Կ. Ե. Բ. Ա.		Անի քաղաքի կործանում.
1080	Գուրեն.	1342	Կաստանդին Գ.
1095	Կաստանդին.	1343	Չուխում Լատին.
1100	Թորոս Ա.	1345	Կաստանդին Գ.
1123	Լեռն Ա.	1365	Լեռն Զ.
1144	Թորոս Բ.	1375	Լեռն զերութիւնը.
1168	Թովմաս Պար.	1387	Լանկթամուր Հայուսաման արշաւում.
1169	Միհ.	1393	Լեռն Ժանը.
1174	Գուրեն Բ.	1473	Օսմաննեամուր Հայուսաման մը- տանում մ.ն.
	ՊԱՄՐԵՆԵՆԵԱՆՆՅԱՅ Թ. Ա. Գ. Ա.- Կ. Բ. Ա. Բ. Ա.	1580	Հայուսաման թոլորովին Օս- մաննեամց իշխանութեան տակ.
1185	Լեռն Բ.	1604	Շահապատ Հայոց մէկ մասն Հայուսաման և տանում.
		1720	Գաւիթը սին նի իշխան.
		1746	Հայուսամուր Օսմաննեամց և Պարսից մէջ բաժանվում. Հայուսամանի մէկ մասն 4828 Պատաց Ճայրն և անցնում.

Անեսու այս ժամանակից, այսիցին 1828 թուականից, երբ Առաջ Նիկողոս կայսր առա Պարսից ճայրից Աշխամենը և բոլոր Արարատան շահնակը, Առաջասամանի Հայերը մինչև այժմ մասնի
Բայսաց կառավարութեան տակ.

ՏՊԱԳՐԱՒԹԵԱՆ ԱԽԱԼ ԱՆ. Բ.

Արժան	Տպած է	Կարգա
8	Հարդանան	Յարդանան:
10	Հ'Հարցանել	Հ'Հարցանել:
11	Ժարդեաւին	Ժարդեաւին:
12	այդապիսի	այդապիսի:
13	Կափայէանը	Կափայէանը:
—	պատասխանը	պատասխանը:
14	զեսու	տեսու:
—	յանձնանքը	յանձնանքը:
—	համեսցի	համամեսցի:
—	զօրեղ	զօրեղ:
—	սպասառթեամբ	սպասառթեամբ:
16	վերջապէ	վերջապէս:
—	զինուորական	զինուորական:
18	Արտիքա	Արտիքա:
19	Նեղիպառ	Նեղիպառ:
20	շանաչել	ձանաչել:
—	շունենք	շունինք:
33	զիգանդ	զիւանդ:
35	Կարգաս	Կարգաս:
36	Մե՛րանի	Մի՛րանի:
37	Առւրծնակ	Առւրծնակ:
—	կուլ զնաց	կուլ զնաց:
38	միջնորդ	միջնորդ:
—	մի անցանելիք	մի անցանցանելիք:
—	սպասորութեամբ	սպասորութեամբ:
40	այս անցից	այս անցքից:

